

Հաղթանակած գործ

Մկրտիչ Բաբաջանյանն 2003 թվականին գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր և մեկուկես ամիս ձեռնարկատիրական գործնեությամբ զբաղվելուց հետո որոշել էր դադարեցնել իր գործնեությունը՝ այդ մասին դիմումներ ներկայացնելով ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի պետական գործակալությանը և Աբովյանի հարկային տեսչությանը և վճարելով այդ պահին առկա իր ունեցած բոլոր հարկային պարտավորությունները: Հարկային տեսչությունը «թեթև ձեռքով» անհետացրել էր տնտեսվարողի կողմից ներկայացված դիմումը և սկսել էր անհիմն հաշվարկել հարկային պարտավորություններ և իր գործողություններով խոչընդոտել անհատ ձեռնարկատիրոջ գործնեության դադարեցմանը: Ավելին, Մկրտիչ Բաբաջանյանը անհատ ձեռնարկատիրոջ գործնեության դադարեցման վերաբերյալ դիմումների մերժման հետ կապված որևէ գրություն չէր ստացել և բավարար իրավական հիմքեր էր ունեցել կարծելու որ իր՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարեցված է: Հարկային տեսչությունը 2012 թվականին հայցադիմում էր ներկայացրել դատարան՝ պահանջելով Մկրտիչ Բաբաջանյանից բռնագանձել ընդհանուր առմամբ 670.400 ՀՀ դրամ, որից 276.100 ՀՀ դրամը՝ հաստատագրված վճարների գծով հաշվարկված անհիմն պարտավորություններ, իսկ 394.300 ՀՀ դրամ գումարը՝ սոցիալական վճարների գծով հաշվարկված անհիմն պարտավորություններ: Մկրտիչ Բաբաջանյանի իրավունքների և շահերի պաշտպանությունը դատարանում ստանձնել էր **Փաստաբան Կարեն Հովհաննիսյանը** և թիվ ՎԴ /0631/05/12 վարչական գործով կայացված վճռով հարկային տեսչության հայցը բավարարվել էր մասնակի՝ 276.100 ՀՀ դրամը՝ հաստատագրված վճարների գծով հաշվարկված պարտավորությունների մասով, իսկ սոցիալական վճարների գծով մերժվել էր: Փաստաբան Կարեն Հովհաննիսյանի կողմից ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկվել էր վերաքննության կարգով և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.03.2013թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի վճիռը բավարարված մասով բեկանվել էր և հայցն ամբողջությամբ մերժվել էր, իսկ հարկային տեսչությունից հոգուտ պետական բյուջեի բռնագանձվել էր պետական տուրքի գումարը: Վերաքննիչ ատյանի որոշումը չէր բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:

Արդյունքում Մկրտիչ Բաբաջանյանը ձերբազատվել էր պետական մարմնի ապօրինության արդյունքում իր նկատմամբ անհիմն հաշվարկված և առաջադրված հարկային պարտավորությունների վճարման պարտավորությունից և վերականգնվել էին նրա խախտված իրավունքները: